

ԲԱԺԱՆՈՐԴ ԱԳՐՈՒԹԻՒՆ

ուղարկոյ համար	
Տարեկան	12 ֆր.
վեցամսեայ	6 »
Արսասահմանի համար	
Տարեկան	15 »
վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 ֆր.
վեցամսեայ	1.50 »
ԳԱՆԻՒԿՆԻ ՎՃԻՐՆԵՐ	

Մանուցման սուր աստիճան երեսին համար 40 սանթիմ կ. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ կ. երեսին անկախակերտ համար 20 Օլո գեղը կրոյայ :

Պուղարկոյ համար ձեռքի (15 ՍԱՆԹԻՄ)

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԸ ԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ դրկել

Խմբագրութեան հասցեի՞

Редакция на вестникъ «Шаржумъ» Варна.

Redaction du journal «Charjoum»

Varna (Bulgarie)

Կրոյութեան և շն սրույր

Արսասահմանի համար ձեռքի

(20 ՍԱՆԹԻՄ)

ԻՆՎԱԾ ՄԱՍՈՒԼԸ

Ա.

Թուրքիոյ հայոց մամուլը միշտ բանակալութեան ամրապինդ գառագեղներուն մէջ ճշմունքով ստրկացած ստիպուած է միայն իր դահիճին ձեռքը լքել, անոր ամէն մէկ վարարքները գովել, անոր տրամադրութիւնները շոյել: Անիկա ամէն աշխատարանի, գաղափարական վիճաբանութիւններէ զրկուելէն զատ, իր համոզումներուն հայհոյոյին ալ ընդդիմախօսել անկարող է: Անոր վիճաբանութիւնները կամ քննադատականները՝ գրական, տէրտէրական, վարժարանական կամ թաղականական շրջանակէն անդին չեն անցնիր բնաւ:

Այդպէս չէ սակայն արտասահմանի հայ մամուլը: Ան կատարեալ ազատութիւն ունի իր ուղած նիւթին վրայ գրելու, վիճաբանելու, իր պաշտած խոհանարները քարոզելու:

Բայց ցաւալի է որ, արտասահմանեան լրագրական ազատութիւնը չարաչար կը գործածուի: Գրանի մը թերթիկներ, ազատութիւն բառը թարգմանելով «անբարոյականութիւն», ազատութիւն, — իրենց սինականները անձնական խնդիրներու առջեւ

բանալ, ալ ու ձախ հարուածել անհատներ, ուժեր, կազմակերպութիւններ—քաջութիւն է, կըսեն: Արդէն քանի մը խմբագիրներ իրենք տիրապետող, թերթներուն մուտքն ալ թողաւորած են ամէն ազտոտ մարդոց—աս ալ ողջմտութիւն է, կըսեն: Փոխանակ ժողովուրդը յեղափոխութեան գիրկը նետել աշխատելու, ընդհակառակը, յեղափոխութիւնը տխուր գոյներով նկարել և ժողովուրդը պաղծցնել անկից—խոհմութիւն, հեռաանտութիւն և դիւանագիտութիւն է, կըսեն: Պարագ վիճաբանութիւններով արտասահմանի ամբողջ զբաղեցրնել, մաքրել պղտորել և այսինչ կազմակերպութեան ալ ուշագործութիւնը յեղափոխական Սուրբ գործէն վրիպեցնել ջանալ—մտղովուրդին օգտակար ըլլալով, ներելի է, կըսեն: . . .

Արտասահմանի մամուլին այս ամէնը քարոզող ստրկալրատեական մասը, գիտնալով գործելու մէջ իր ապիկարութիւնը և պատուաւոր բանակալի մէջ ալ անկարողութիւնը, հարկադրուած է ելնել համեստութեան շրջանակէն և ուրիշ գուռ զարնել—մատնել, լրտեսել, դաւաճանել, ասոր անոր միւր ծամել: Անոր վիճաբանութեան շարժառիթը այլեւս հայն ու կիր-

քը ըլլալով, իսկ նիւթը՝ սուտը, մուրը և անձնաւորութիւնը, չը գիտնալ կեցողութիւնը՝ բանակալութիւնը սրտակից բարեկամներու մէջ տեղի ունեցած վէճի մը ձեռով կատարուելով միայն կը պարզուի այս կամ այն խնդիրը, բուն նպատակը անդին կը գլտորէ: Գրական անամութիւնները ամենակեցողոտ աստիճանին հասած է: Բաւական է որ մէկը փոքրիկ թշնամութիւն մը ունենայ, միշտ պատրաստ են, յաջող պարագայի մը մէջ, իրենց հակառակորդները ցելտոտել: ու «միշտ այս անձնական հակառակութիւնն է որ կը փոխեն գաղափարականի» . . . Ճշմարտութիւնը ազտոտ ու անպիտան կիրքերու մէջ կը խեղդուի խճճածանքը վերջին աստիճանի անարգութեան հասուցած են, — օրինակի համար, մէկը յօդուած մը հրատարակած է, հեղինակին և հրատարակուած թերթին հակառակորդը՝ յօդուածին բովանդակութեան հետ զործ չուրին, հաւու մը պէս կը փորձեն գրուածքը, անկէց կը հանեն չնչին հատիկ մը և կը խճճեն: ու «չատ անգամ, յօդուածին հետ անոր հեղինակին անձը և հրատարակող թերթը կը լայ խճճածանքի առարկան» . . . Եւ անոնց քննադատական քաջութիւնը: . . .

Մամուլի ազատութենէն և խմբագրին ալ համարութենէն սիրտ առած՝ ամէն տիրապետող կամ ստրկալ, իր ուղած անձը կը հարուածէ: Այս ազտոտ կռիւտները—ծնունդ առած քանի մը թերթիկներէ — աւանց անոնց՝ արդէն մեր հասարակութեան փճացած ճաշակը կապական են, միտքերը կը պղտորեն և մահացու թոյն են: Այդ ազտոտութիւնները գործող լրագիրները՝ հիւժախտ մըն են, կրծող որդեր են, սրոնց դէմ պէտք է մաքսուին ամէն անոնք՝ որոնք քաջ համարուած են այդ ախտին վնասարար ըլլալուն: Այս բովանդակ հայ մամուլին պատուը արտաող քանի մը անորակելի լրագիրներուն տարափոխիկ ախտով միայն ամբողջ չէ որ կը վարակուի: Անդին իր կոչումին լիով զիտակից, իր սկզբունքներուն հաւատարիմ մամուլն ալ կը վարակուի: Ան տեսնելով որ իր անունին շուրջը իր գաղափարներուն շուրջը, ազգին, յեղափոխութեան պատիւին շուրջը, հացկտակ-վատերու կողմէ միշտ ցելտե թուճեր կը քաշուին, պայմանաւոր համբարութենէ մը վերջ, ան ալ, կամայ ակամայ, կը փորձուի ասպազել զալ, կը ստիպուի կոտիլ,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՄԻՍԼԱՍՈՒԹԻՒՆ

Ասոր ո՞ր թուրքը «Սանճագը Շէրիֆ»ը բերնէն վար կը նետէ, նգովից արմատներ, Թուրքիոյ ամէն շրջանակներն ալ ասոր տեսակ մը էլէքտրականութիւնով լեցուած գործիքներ են, որ միշտ կը սպառնան նաև կայծակներ ու որոտներ պոսթկալ: Ամէն խրմբով թիւրք կամ քիւրտ համալ քրիստոնէի մը դէմ սրղողած աստիճանակները կը ճըրտելով «ախ Ֆըրսանգ» կը մտնայ գազանի մը պէս: Ամէնուն աչքին մէջ ու մտաբերող դէմքին վրայ կը կարգաս ներքին գաղտնիք մը, ծածուկ փոթո-

րիկ մը, գաւազութեան խոշորիկէ տխրանական ծրագիրներ . . .

Պէշիկթաշի վերերը, քաղաքի, ծովի ու աշխարհի աչքերէն թափնուած ոսկեպատ որջ մը կայ, անթափանցելի պարիսպներով ու երկաթէ վանդակներով պարփակուած: Երկարքի գաղանոցն է ան: Ատ որջէն է որ կը հոսի աս գաղանի յոյսերու, փայփայած գուրգուրած գաղափարներու հոսանքը:

Ու երկարքի մէջ ամէն ոք, սկսեալ մեծ Ոճրագործէն մինչև մանաւ կառագործ Պաւլի-բաճին (բաճի հօրեղբայր) խոր համարում մը ունի, թէ երկարքի աս օրուան մարմինին ամբողջպէս վիճակուած է իրականացրնել 2—300 տարուան ձեռքէ փախչող ծրագիրներն ու ցնորքները:

Աս մահմետական բթացած ուղիներու ամէն գաղտնի ու յայտնի ծրագիրները, սենչերը և գառանցանք-

ները մէկ բառի մէջ կրնանք ամփոփել: Ու աս բառը հաւիտաւորութիւն կըսուի:

Կը հասկնա՞ք, ինչ ըսել է համեստութիւն, Կենթագրեմ, որ ամէն մարդ աս բառի մտաւոր միտքը աղէկ կը մընէ, կը թողում փիլիսոփայական բացատրութիւնը «փիլիսոփաներուն» և կանցնիմ պաշտօնիս—թղթակցի, քիչ մը գէպերը լուսաբանող թղթակցի պաշտօնիս:

Համեստ ամենէն աւելի փայփայած իտէալը համեստութիւնն է: Ու ասոր հասնելու համար աս խեղափոխումն իմաստը, աս շորցած ուղիով գազանը ամէն ձիգեր կը գործադրէ:

Երկարքի հրէշի միջոցները երկուք են: Ա. Ենթին քաղաքական և թիւն և Բ. արտաքին: Խօսինք ասոնց մասին:

Ա. Ենթին համախառնական քաղաքականութիւն: — Թուրք պետութեան

սահմաններու մէջ համեստութեան գաղափարը իրականացնելու միակ միջոցը Համեստ կը գտնայ քրիստոնեաները կոտորելու մէջ, որչափ հնար է իսկ կոտորելու անկարելի եղանակներու իրաւունքները սահմանափակելու, զանոնք նեղելու և ճնշելու միջոցազանոնք իր սահմաններէն դուրս ելլալ ստիպելու:

Աս մտաւոր նպատակին հասնելու համար ալ Համեստ կրկին սրկու միջոցներ ունի: Ա. Մահմետական նոր գաղթականներ հրաւիրել: Բ. Բրիտանոնեաները կոտորել կամ անոնց ամէն իրաւունքները խլել:

1876ի Ռուս-թրքական պատերազմէն առաջ և ևտքը յայտնի է թէ որչափ հազարներով չլքեցէ՞ լազ, քիւրտ ու թիւրք լեցուեցան կովկասէն ու մասամբ Խրիմէն Տաճկաստան: Ամէն եկածները Սուլթան տեղաւորեց հայկական վիլայէթներու

խօսիլ հակառակորդներուն «հասկըցած լեզուովը» : Եւ սուրբիւ, ի՞նչ արտասովոր համբերութեան տէր ըլլալու է խմբագիր մը՝ որ, ինք ալ ժողովուրդին մեծկակ մէկ մասին իղձերուն, գաղափարներուն թարգման ըլլալով մէջտեղ, անտարբերութեամբ դիտէ անդին անարժաններուն կողմէ, «ժողովուրդին անունով», «ժողովուրդին ձայնով» գործուած հարիւրաւոր դաւաճանութիւններ :

Ահա՛ թէ ի՞նչ բանի պէտք է վերագրել, շատ անգամ, պատուաւոր և իր դերը ճանչցող մամուլին «ակամայ իր հակառակորդներուն հետ կուտել ստիպուելը» : Աւայս ամէնը տեսնելէ վերջ, միթէ իրաւունք չունինք մամուլի ազատութենէն խորշելու :

F.

Ըսածներս հաստատող շատ օրինակներ ունինք աչքեքնուս առջեւ : Բայց ես չի պիտի խօսիմ այն լրտես-գրագէտ-յեղափոխականներուն վրայ, որոնք ճիշդ ու թիւթութեամբ, ազոտոտ գոյութիւններն քարշ տալու համար, թերեւեւ անհնար զեկը ձեռքերնին առած, և «տօպրակը դնելով» իրենց տխրահաշակ անցեալն ու ներկան, ամենէն նուիրական կազմակերպութիւններ, անձեր տապալելու անմիտ ջանքը կընեն, ազգն ու յեղափոխութիւնը կը լրտեսեն կամ կը դաւաճանեն, օգտուելով մասնաւորապէս իրենց համակիրներու «կոյր հիացումէն» : Զի պիտի խօսիմ նաեւ այս լրտես-յեղափոխականներու «թելէն շալոյ» հեռաւոր ու մտաւոր գնչու-թերթիկներուն վրայ : Ինչո՞ւ հեռուն երթանք, երբ արդէն օրինակը մեր քովի կը ունինք պատրաստ :

Երբ Վառնայի «այժմեան» կիրոնշարթաթերթին խմբագիրը, կիրքի ազդեցութեան տակ, իր թերթին պատիւ բերող մէկ աշխատակիցը մատնեց, անոր և ուրիշ աշխատակիցներու հասպէին խելքէ մտքէ դուրս հայհո-

յանքներ ըրաւ, հասկցայ թէ խմբագրի դիմակին տակ ի՞նչ նկարագիր մը պահոււրտած է : Այս մէկերկու տարուան մէջ քայլ առ քայլ հետեւեցայ այդ թերթին, ուրկէ յուշատետրի մէջ նշանակուած տխրալի տեղեկութիւնները հրատարակել երկար պիտի ըլլայ, որոնցմէ ամենն ալ զատ զատ գոյներ ունին : Կը բաւէ այս մէկ երկու ամսուան թարմ նիւթերէն հաւաքածոյ մը ընել, որոնք իմ ըսածներս հաստատուելու կը բաւեն :

Որքան արգահատելի է թերթ մը, որ առանց որոշ սկզբունք մը ունենալու, իր հոգը միայն ճարելու համար, ամբողջ թոյլ կողմ մը շահագործելու կաշխատի : Այս քանի մը ամսուան մէջ միշտ այդ բանին ետեւէն պատեցաւ յիշած թերթս : Քանի մը Արփիարականներ սիրաշահելով, իր գոյութիւնը ատեն մըն ալ քարշ տալու համար, ան բացաւ իր սիւնակները «Պատուոյ առեանի» մը պէս անմիտ ու խելզուկ առաջարկին առջեւ, և իր ազմուկծիւթիւնով հրապարակը լեցնել ջանաց : այնինչ ինքն ալ համոզուած է թէ՛ այդ հարցը հրապարակ նետող ի՞նչ ազոտոտ նկատումներ ունի : Զորս Արմենականի, հինգ Արփիարականի պոռչուածք «ժողովուրդին ձայնը» հռչակելու չի վարանեցաւ, առանց ձեռքը խցիկի դրած մտածելու թէ՛ «մէկ ծաղիկով զարուն չի գար» : Հրապարակուելու կոչ ըրաւ, ո՞վ ամօթ, որպէս զի ժողովուրդը յեղափոխութեան գրամ չիտայ : Աւրիշ անգամ մը, որբերուն կեղծ պաշտպան հանդիսացաւ, ու իր հաշիւները առաջ տանելու աշխատեցաւ : Տեղ մը, ազնիւ ճանչցուած անձերու վրայ յարձակեցաւ անիրաւարար, տակից իր շահերը ունենալուն համար . . . և դեռ չա՞տ : Եւ երբ «ճարժում» արդար զայրութիւնով մը լցուած կը պատասխանէ, «զրպարտիչ», «ղէչ», «արգարութեան ձայնը անարգող» կը լայ :

Վերջապէս, չի մոռնամ, տեղ մըն ալ, ո՞վ վատութիւն, երբ հայկական յեղափոխութեան մէկ հատիկ ու թու Ռուսիոյ ձեռքը գործիք կանուանէ, և յեղափոխութեան պատիւին նախանձախնդիր ազնիւ մէկը — Բազէ — այս անիւրաւ յարձակումներուն դէմ կը բողոքէ, ի՞նչ ըսէ ազգէկ — մենք պիտենք ո՞վ ըլլալը . . . : Ասկից դուրս կուգայ որ խմբագիր պարոնը, լրտեսական միջոցներու ալ կը դիմէ . . . : Փոխանակ գրուածքին հոգին ու միտքը քննելու, հեղինակը ճանչնալու կը ջանայ, որպէս զի . . . : Գըրուածքը ունէն դատելու ինչու ճուղ տրամաբանութիւնը ընէ : . . . : Եթէ Բազէ խուլ, կաղ, հաշմանդամ կամ յաղթանդամ մէկը եղած ըլլայ, կամ քսան — երեսուն տարու երիտասարդ մը, ի՞նչ պիտի հետեւցուի ատկից : Աւայս լրտեսական ախտը, խմբագիրէն կը փոխանցուի իր թղթակիրներուն, համակիրներուն . . . : «Որբախնամի» մասնակցող մը» նոյն անմիտ խօսքը կը կրկնէ, Բազէի հարցումներուն տակէն չի կրնալ պրծելուն : Իսկ քաղաքիս մէջ, կը լսեմ որ, այս կամ այն անհատին վրայ կասկածելով տարածայնութիւններ կընեն, անձեր՝ որոնք արտասահմանի թերթներուն հետ ո՞չ մէկ կապ չունենալուն վստահ եմ : Եւ այս լրտեսական քայլը տեսնելով, իրաւունք չունինք խնդրելու «ճարժում» աշխատակիցներէն որ միշտ մէկ ծածկանունով մը գրել չի շարունակին, քանի որ իրենց պատճառով ուրիշներ կրնան փոխանցուիլ, հոգ չէ թէ այն ատեն ալ տարբեր կողմոց պիտի հանեն :

Բայց խնդիր է գիտնալ թէ, ստրկա-լրտեսական մամուլին դահալիժումը մինչեւ ո՞ր պիտի հասնի, և արտասահմանի հայտարարը ե՞րբ պիտի կրնայ անկեղծ կեղծաւորէն, լաւ գէշէն զանազանել :

ԿԱՐՕ
Ֆիլիպէ
—) (—

Կերմանա-Հայ ընկերութեան բերան Միթթայուրունըն առաւ ակն Օրիէնթ թերթի մէջ կարգացինք հետեւեալ յօդուածը :

«Ռուսահպատակ հայերը եւրոպական քաղաքակրթութեան հետ աւելի մօտէն շփում ունեցել են քան թրքահպատակ հայերը : Այս պատճառաւ առաջիններուն մէջ հայոց ազգային վերածնութեան գաղափարը շուտով պարարտ հող գտաւ, ու ժող կերպով արտայայտուեցաւ քան վերջիններուն մէջ : Զայս յատկանշանով իբր օրինակ մենք յատուկ կը բերենք հոս Ռուսահպատակ հայու մը հետեւեալ հայեացքները որք ի մէջ ալ յոց կը գրէ մեզ :

«Հայերս կը գտնուինք հիմա մեր պատմական կեանքի էն դժուար մէկ շրջանին մէջ : Թրքական աճուրդի կոտորածներէ վերջ, որոնք մինչեւ այսօր պարբերաբար կը շարունակուին, ոտս կառավարութիւնը սկսաւ ծանր ճնշում բանեցնել հայոց վրայ : Եւ երթարկեց դանոնք գորտուր հայաձանքի : Այս կը նշանակէ ինկածը զարնել : Երկու հարիւր աւելի զրպարոցներ յափշտակուեցան մեզմէ, հայ ուսումնարաններու համար բարերարներէ կտակուած նիւթական հարուստ միջոցները կայսերական հրամանով յարքուրիս գրաւուեցան : Դպրոցները հիմա հեռուեցան կը բացուին : Բայց իբրև ոտս-կառավարական զարոցներ : Կէս տարի առաջ բոնապարտուեցան «Հայ Բարեգործական Ընկերութեանց» իրաւունքները, հայկ. ժողովրդ. զրադարանները զոցուեցան : Նոր ելած կանոն մը կըստիպէ որ հայը դատարանին առջեւ Ռուսերէն երգմուտ, կաթողիկոսը երթալով կը կորսնցնէ կառավարութեան առջեւ իր ազդեցութիւնը, մեր ամենէն լաւ թերթերէն մին «Արձագանք» երկու տարի առաջ յաւանական գաղափարներ թերթակեցաւ : Ամիս մը առաջ կովկասի ընդհ. կառավարչապետը ու թն ամսուան համար դադրեցուց ռուսերէն ամենէն արդարադատ թերթը «Նովոյէ Օպոզիցիոն» : Կառավարչապետը կը մտածէ թէ՛ «Նովոյէ Օպոզիցիոն» ոտսերէն տատնող հայերէն թերթ մըն է : Մի քանի ամիս առաջ Մոսկուայի մէջ ուսանողներ ձերբակալուեցան ընկերակարական եւ հայկական իրնդիրներու պատճառաւ եւն եւն :

Հինգ տարիէ ի վեր Ռուսիոյ մէջ

մէջ մէկ կողմէն հայերու թիւը եւրոպացիներուն քիչ ցուցնելու, մէկալ կողմէն իր ջարդերու հրէշաւոր ծրագիրը իրականացնելու յարմար դահիճներ նախօրք պատրաստելու նպատակով : Սղատուած Պուլկարիոյ ամէն թուրք ու արպան մահմետական տարբեր կեցողանցուց ներկայ Մակեդոնիոյ դաւաճաններուն մէջ հոն եւս պուլկար տարը միշտ ճնշումի ու թալանի սարսափին մէջ պահելու համար : Աստիք ալ քերտերու պէս դահիճներ եղան Մակեդոնիոյ քրիստոնեաներուն համար, և եթէ մինչեւ օրս «Մակեդոնական ջարդեր» խոշոր չափերով տեղի չեն ունեցած՝ անպատճառ օր մը պիտի կատարուին : աս եւ ոչ մէկ կասկած կը վերցնէ :

Երկար ատեն է որ թուրքին կորսնցուցած ամէն երկիրներէն մահմետական տարբեր կը խուժէ թուրքիս, բայց երբէք անչափ կանոնաւոր, օ-

րինական ու ստացած չէ ատ հոտանքը, որչափ վերջին հայկական արիւնոտ գէպքերէն ետքը : Կազմուեցաւ «մուհաճիք քոմիտիոն» մը որ կովկասէն, Խրիմէն, Պուլկարիայէն, Ռուսաստանէն ու Կրէտէնէն եկող մահմետական գաղթականներու համար «նոր ու ազատ» հողեր գտնայ, գիւղեր ու տուններ հիմնէ, մշակելու գործիքներ, կենդանիներ ու սերմնացու մասակարարէ և այլն : Աս քոմիտիոնի նիւթականը հայթայթելու համար սկսուեցաւ ժողովարարութիւն որու մասնակցեցան շատ մը հարուստ հայ աղաներ ալ . . . : Տրուեցաւ բազմաթիւ նուազահանդէսներ, ներկայացուցանք, կազմուեցան «լոթրի»ներ յօդուտ աս գաղթականներու քոմիտիոնին և այլն : Բայց այդ ամէն գաղթականներու եկող խուժբերու անվերջ հոսանքի ամէն կարեքներուն չէր կրնար բաւարարութիւն տալ :

ստակ էր պէտք, իսկ պետական դանձարանը պարապէր, այլեւս օգնել չէր կրնար : Ան ատեն, աս տարուան սկիզբը, ստեղծուեցաւ «գրոյմ գաղթականներու համար» : Ամէն կառավարութեան ուղղուող թուղթ (խնդրագիր, պայմանագիր, առուձախի թուղթ և այլն և այլն) պէտք է կրէ իր վրայ, համաձայն իր պարունակութեան, մէկ դահեկանէ մինչեւ 5-10 սովինոց փուլ մը ու ատ փուլին ամբողջ արդիւնքը պիտի յանձնուի Մեծ Ոճրագործի անձնական հովանաւորութեան սակ եղած «մուհաճիք քոմիտիոն»ին : Աս առաջին տարուան առաջին եռամսեակի զուտ արդիւնքը աս փուլերէն եղաւ 6000 սովիի անհալին զուժար մը, որ յանձնուեցաւ յիշեալ քոմիտիոնին :

Ատ փուլերու գրամներու մէջ կան և հայի, յոյի ու պուլկարի զրամներ . . . կամքով չէ որ կուտան, զօ-

րով կտանեն, ու իրենց ստակով իրենց համար նոր ու աւելի արիւնարբու դահիճներ կը պատրաստուին ընդ գէմ : Ան մահմետականը, որ կը փախչի քրիստոնեայ պետութենէ մը սիրտը լեցուն է գաղանական վրիժառութեան բողով մը :

Ոչ ոք անչափ հրէշ, անչափ գազան ու արիւնարբու չէ որչափ ատ քրիստոնեայ երկիրներէ փախած եկած նոր տարբեր, իսկ Համիտի ու զան ի՞նչ է, բորենիներ՝ մարդեր պատուելու, գիտական բզբուելու համար :

Փուլերու գործածութիւնը Տաճկական անպոյճ-անպուխ անիշխանութեան մէջ գեռ եւս մէկ քանի մը տեղ միայն սկսուած է գործադրուիլ և գեռ ընդհանրացած չէ : Կենթապուրի որ եթէ ընդհանրաւորապէս, տարեկան 50,000 սովիի զուտ եկամուտ մը պիտի տայ անշուշտ, բայց զոգցուածը . . . :

հայերու մասին այնքան ազդու կ'ընթացնէր է, որ մարդ կըստարարի մտածել թէ հայերը ուրև կայսրու- թեան փլատակներու վրայ հայկա- կան թագաւորութիւն մը կանգնել կուզեն : Կովկասի նախկին խղճամիտ փոխարքայ մեծ-իշխան Միքայէլ (եղ- բայր Աղեքսանդր Բ.ի) շատ արդա- րացի ըսեր է «Բէթիբարակի մէջ կը հաւատան թէ հիմա ամէն հայու սան մէջ թնդանով մը պահուած է, : Ռուս պահպանողական մամուլը կատարի պատերազմ է հրատարակել հայերուն դէմ : «Ս. Բէթիբարակեան Վլաս- մասթի կը կազմէ ասոնց մէջ միակ բացառութիւնը, որ հայերը ուժեղ կերպով կը պաշտպանէ : »

Սա հարցը թէ հայկ. այս ուրու- կանը լոկ երեւակայութիւն մըն է թէ իրողութիւն, այսինքն այս հա- լածանքներուն հիմը սխալ թիւրի մացութեան արդիւնք մըն է թէ Ռուս-քաղաքական տեսակէտով տրա- մարանօրէն արդարանալի է» այս գործով հետաքրքրուող հայու մը հա- մար զգուար է պատասխանել, Բայց անկասկածելի ճշմարտութիւն մըն է թէ «հալածանքը սարածանք է յա- ունջ բերեր, թէ հալածանքը պատ- ճառներէն աւելի սպառնալից, աւելի վատնագաւոր (եթէ կարելի է հոս վը- տանգի վրայ, խօսիմ) պիտի ըլլան հետեւանքները : Տեսնենք ի՞նչ եղան հալածանաց հետեւանքները : Ճիշդ ճիւղէ է որ կովկասի մէջ հայոց ազգ- ոգւոյ հոսացման, ազգ. ոգւոյ զարթ- ման, միաբան խորհելու, զգալու, գործելու մի նոր շրջան կսկսի : Ետեւոր օրոնք ազգ. դասի մասին անտարբեր էին կսկսին հայկ. շարժման ուղղակի մասնակցել : Ետեւոր իրենց կատարա- րական պաշտօնները կը ձգեն ու կը հեռանան : Ամբողջ կովկասի հայե- րուն բերնէն միեւնոյն հարցումն է որ կ'իմացուի : «Մեզ ինչու կը հա- լածեն, մենք ի՞նչ ըրեր ենք ուր- սիոյ : Զարեալ արեւելեան պատե- րազմներու մէջ մենք չէինք անոնց աջ բազուկը, Ռուս-թրքական պա- տերազմներու մէջ մենք չէինք փայ- լուն յաղթանակներ ստանդները : մեր Լոտիս-Մելիթօֆներով, Լազար- եաններով, Տէր-Ղուկասօֆներով, Շէլդոնիբոֆներով : Մեր թրքական պա- տակ եղբայրները չէին, որ ամեն թուրքիոյ հողին վրայ կոխող ուրս բանակ մեծ հանդիսաւորութեամբ ե-

() Իսկ թէ այդ թերթը հայերը հայերու համար չը պաշտպաներ. առ լաւ պարզած էր Երթուածի մէջ Ու- սանողը, Տիւրիսէն : Ի. Խ.

մաղթանքներով ընդունեցին . . . » Հիմա ինքնահասակնալի է, որ հա- յը հեւեւեւալ որոշման հանգր է :

Ա. Թուրքիոյ մէջ՝ Ֆիզիքական ջնջում

Բ. Ռուսիոյ մէջ՝ բարոյական ճը- շում

Գ. Եւրոպայի մէջ՝ ընդհանուր լը- քում

Ուստի մեզ կը մեայ միայն անձ- նական ուժի վրայ կրքնիլ, զէնք ի ձեռնի պաշտպանել հայրենիք եւ ազ- գութիւն :

Արդեօք հաճելի պիտի թուի՞ մեր այս որոշումը Ռուսիոյ, ինկասի ունենալով այսքան բարդ արեւելեան հարցերը (թրքական, պարսկական, ասիական, թերեւս հոյակական), որոնք անտարակոյ պապայայն մէջ հսկայապէս պիտի մեծանան . չեմ կար- ձեր որ հայոց ուստիոյ դէմ բռնած թշնամական դիրքը ուստական արե- վելեան յաջողութեանց նպատակով ըլլան :

Հայոց ժողովրդ. մեծ բանաստեղծ Գամառ-Քաթիպան ըսեր է, «Թշուա- ուր թշուառին է միշտ միխթար» : Մեր ուստական եղբայրները շա- տոնց նախատեսած էին ուրս բռնա- պետութեան լարած թակարդները, այսօրուան հասած աղէտները եւ ինքզինքնին թշուառ կըզգային : Թշուառ զգացին եւ եղբայրական ձեռք մեկնեցին թրքական դաժան լուծի տակ հեծող թշուառ եղբայրնե- րուն : Բոցավտանցին հայրենիքի ա- զատութեան սուրբ կրակը իրենց հո- զու մէջ եւ կայծեր նետեցին զէպի հարաւ, բունկցուցին հոն ալ միեւ- նոյն հրդեհը : Տուին մեզ զաղափարի մեծ քարոզիչներ Բաֆիներ, Գա- մառ-Քաթիպաններ, տուին մեզ սպա- տութեան քաջամարտիկ զինուորներ, յեղափոխական անվեհեր գործիչներ . . . Եղբայրական անխորտակ սէրը միա- բան գործունէութեան ներդաշնա- կութիւնը շարունակուէր է մինչեւ այսօր եւ պիտի շարունակուի մինչեւ յաւիտեան :

Այս իրողութիւնը կը սարսափեց- նէ կարմիր-Գաղանը իր որջին մէջ, Մեծ-Մարդասպանը զիւային ծրագիր- ներով ճիգ կը թափէ այդ ամուր կայր քակել, ազատութեան սուրբ պատերազմի մէջ կուրծք կուրծքի կուրծք եղբայրները իրարմէ բաժնել որովհետեւ այդ կը պահանջէ իր բռնա- կալի սեւ դերը : Հապա ի՞նչ անունով մկրտենք այն հայը, ազգ. Տեղափո-

թուրքերու մէջ Համիտ ունի բազ- մաթիւ գաղտնի գործակալներ, մերթ հիւպատոսի, մերթ մօլլայի կամ սօֆիայի . մերթ տէլիդիլ կամ ուեւէ պաշտօնեայի քողի տակ ծածկուած :

Աս գործակալները վարդազոյն եւ բանգներով կը նկարագրեն իսլախիլի ձիւսլիլ պետութիւնը, մահմետա- կաններու հոն վայելած զբախտային կեանքը, սպառնութիւնը եւ առա- վելութիւնները, քրիստոնեայ կեա- վութիւններու հըու հնազանդ շնական վիճակը եւ կը բորբոքեն հոն, եր- ջանկութեան երկիրը երթալու կրա- կը ու անպատիւ ամէն հրէշութիւն ընելու վայրը :

Ընթերցող, չի մոռնաւ սա գոր- ծակալները. քիչ մը վերջը զանոնք նորէն պիտի տեսնենք :

Ի՞նչ է Համիտի նպատակը, որ այսչափ ջանքեր թափելով կուզէ իր երկիրը կիսաբարբարոս տարրերով լցնել :

Իսկան (սպաղր. սիւալ չէ) խմբակի գլուխը, որ իր սիրահանուկ «Մարտ»ով միւլենոյն ճիւղալային զաղափարը քա- րուէր է, կատարի կոխ է հրատարա- կել կովկասի հայոց դէմ, զրգարտեր է ուստական հայ ազատութեան անձնուէր զինուորը իբրեւ Ռուսիոյ ձեռք կաշառուած գործիք, — եւ այս ինչու — որովհետեւ «մարդ ուստիւ համար կապրի», որովհետեւ այդ կը պահանջէ սեւ կիրքը, առով կը հաս- ցուի հայկ. յեղափոխութեան ծանր հարուած . այդ կը պահանջէ Օսմ. պե- տութեան — եւ կը սեմ արեւնարբու Համ-իթի-հաւատարիմ միայնու պար- տականութիւնը, Կոխ կըսենք, բայց ի՞նչ ողորմելի կոխ, զրջի կոխ, ու- բուն վրայ հայ յեղափոխականը ար- համարհանքով կը նայի, ի պահան- ջել հարկին իր երկասայրին կը շող- շողացնէ, վեցհարուածեանը կը զո- ուացնէ : Այս փորձը «Մարտ»ի հակա- յեղափոխական խմբագրի կաշիին վրայ կատարուելու տեսնալու բարե- բաղդութիւնն ալ ունեցանք :

Եւ սակաւին կը գտնուին մէր մէջ միամիտներ (հազար երանի թէ չը լինէին շարժմաներ . . .), որոնք իրենց այս տիւրը շահատակութիւն- ներով ինքզինքնին ծանր դատա- պարտութեան ենթարկող թշուառ- կանները պաշտպանելու փորձեր կը- նեն, ելեր Դաշնակցութիւնէն «Պատ- լոյ Ատեան» կը պահանջեն «Դրօշակ»ի յայտնի «յաւելուած»ի ճշմարտութիւ- նը ստուգելու համար :

Ո՛չ, պարոններ, Դաշնակցութեան կ. Պօլսոյ կօմիտէն մահուան դատա- պարտած է Արփիարը, յեղ. բանակի պատիւը բարձր է, նուիրական է ա- մէն ազնիւ հայու, ամէն ճշմարիտ յեղափոխականի համար, յեղափո- խութիւնը իսկապէս չէ . այդ վճիռը կը մեայ անփոխելի : Զեր ա- ուջարկած «Պատուոյ Ատեան»էն յա- բարձր է եւ արդարագատ Դաշնակ- ցութեան յեղ. զինուորական ասեա- նը որու վճիռը բեկառելու իրաւուն- քը տրուած չէ, ոչ մէկ մարմին, ոչ մէկ ատեանի, մանանանդ ոչ մէկ սկեպտիկ ազգայիններու խմբակի :

Հնչակեան անարկու կուսակցու- թեան բեկորներու վրայ նստիլ կար- ձելէ վերջ Արփիար իր թունաւոր սլացքները ուղղեց Դաշնակցութեան դէմ : Խորամանկ աղուէսը ուղեց «համբոյրով» մը մատնել Դաշնակ- ցութիւնը : Միութեան հարց առա- ջարկեց, երկար ատեն միաբերը այդ հարցով զբաղեցուց : Հիմա արարատ այնպէս համոզուեր է, որ կրակը ջուրին, յեղափոխական հակայեղա- փոխականին հետ միացնելու է ժա-

Պարզ, բայց ինչպե՞ս, սխալ նպա- տակ մը. կուզէ զժգոն ու սպաստաբ- քրիստոնեայ տարրերը չէզոքացնել, արմատախիլ ընել, իր ամբողջ պե- տութիւնը ձոյլ ու միապաղաղ մահ. մետական ֆանատիկոս տարրով մը լցնել, ձոյլ միութիւն մը կազմել, ուժեղ ու զօրաւոր միայն իր կամքով, իր կրօնական ծայր ֆանատիզմով : Միութիւն մը, որու ամէն անգամը «սանճագը չէրթիք» (սրբազան կար- միր գրօրը) տեսած պահուն մէկ մար- դու մը պէս սոսքի վրայ ելլայ, սուրի ու կրակի վրայ վաղէ ստանց մահէն վախնալու :

Երբ սա կեղբորնացման հսկայ գործը լրանայ, ան ատեն Համիտ պիտի պարզէ սրբազան գրօրը, եւ կարմիր մահիկը, զերեզմաններէն պիտի հանէ Մահմետ ու խալիֆաները եւ ան ա- տեն միայն իր պաշտպանողական դիրքէն պիտի ելլայ ու սկսէ յարձա-

մանակ, ո եւ է ազգի մէջ կարելի չէ եղած :

Միութեան հարցը առաւ լուրջ կերպարան : Ամէն հայ հակացաւ որ մենք միայն երկու յեղ. կուսակցու- թիւններ ունինք «Դրօշակ»ը եւ «Հնչակ»ը : Ասոնց մէջ համբաշխ գործունէութեան կապ մը հաստատ- ուած տեսնալ ամէն ազնիւ հայու փա- փաքը ըլլալու է : Գործին տեղեակ գործիչներ իրարու մօտենալով պաղա- բուն խորհելու են, որպէս զի առանց հրապարակային ազմուկի եւ կարելի եղածին չափ շուտ իրականանայ մեր այս ցանկութիւնը : Երկու կուսակ- ցութեանց ալ նպատակը, իրած հայ- բնիքի ազատութիւնն է, որու հաս- նելու միակ միջոցը երկու կողմէն յեղափոխութիւնն ընդունուած է. Դաշնակցութիւնը միշտ համակիր է եղեր լաւ յեղափոխականներու հետ համբաշխ գործելու զաղափարին, Հնչակը վերջերս հրապարակաւ յայ- տարարեց այս մասին իր պատրաս- տականութիւնը, ուրիմն ի՞նչ ար- զելք կրնայ կատարել քոյր կու- սակցութիւններ իրարու ձեռք մեկ- նելէ : Այս քայլը կուսայ հակայե- ղափոխականներուն ծանր հարուած մը, վերջ կը դնէ շատ մը տնտեղի տարաձայնութեանց եւ կուսակցայ բարբար արդիւնք : Միութիւնը ոյժ է :

Դատնանք մեր հարցին : Հրապա- րակի կամաց կամաց լուրջ կը վրդո- վէ սակայն պետակտիչ ոգին եւ իր խմբակը, պէտք է գորտի կոկոնց քարձրացնել, ո եւ է ինքրով արտա- սանմանի հայոց ու շարժմանը ի- բնից վրայ դարձնել—բարեբաղա- բար շնչափողուն որչափ ալ պատ- ոնն ձայններին հայրենիք չեն կըր- նար հասցնել : Եւ հանճարեղ տեսա- փոխականը ըսաւ . «Եղիցի հարց . . . եւ «եղեւ Պատուոյ ատեանի հարց . . . Բայց յուստարութիւն : Դաշնակ- ցութիւնը ո եւ է ժամանակ չէ զբա- ղեր եւ հիմա չուզեր ալ զբաղիլ այդ օրինակ անհատական ստոր հարցե- րով . իսկ զայն ստիպել, Պարոններ, ձեր տատուածներն անգամ չեն կըր- նար : Դաշնակցութիւնը ունի հայ- բնիքի մէջ կատարելու նուիրական պարտականութիւն, պէտք է շարու- նակ սխտուած սրբազան պատերազ- մը, պէտք է սեղմէ կուրծք քաջերու շարքերը : Մահացու մեղք է, ոճրա- գործութիւն է ազատութեան քաջա- մարտիկ զինուորը զբաղեցնել ան- պէտ, ազգափնաս հարցերով : Ալ հե- րիք է, ձգեցէք յեղափոխութեան պոչը, դուք յեղափոխութեան չէք հասկնար, դուք յեղափոխականներ

կողական դիրքը, գրաւէ կորոնցու- ցած ամէն նահանգները եւ վերահաս- տատէ խալիֆներու ծովածաւալ կայս- րութիւնը :

Բայց այս հէրքիւլէսեան ծրագիր- ներու համար պէտք է նուեւ օտար երկիրներու ամէն հաւատարմութեան գործակցութիւնը : Պէտք է որ վիլ- հելմ կայսեր երեւակայութեան մէջ եղած 300 միլիոն մահմետականները ամէնքը մի. սին, միաժամանակ շար- ժուին :

Աս նպատակին ալ հասնելու հա- մար կայ սոստիլիս փաղափախանքիւնը որու մասին պիտի խօսինք քիչ մը ետքը : Աս այժմ ներքին քաղաքա- կանութեան երկրորդ մասն ալ քըն- նենք՝ քրիստոնեաներու դէմ գոր- ծածուած միջոցները :

ԲԱԺ

(Մնացածը յարստիցի)

ծնած չէք. այլ եւս կեղծ դիմակի տակ մտնելով զայն չէք կրնար շահագործել: Ձեր ընթացքը արգար զայրոյթով: Թուանալից բարկութեամբ կը լեցնէ ամէն ազնիւ յեղափոխականի սիրտը. . . . եւ զուր գիտէք ի՞նչ ինչ կը նշանակէ յեղափոխականը զայրացնել. . . .

Ա. ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ
Զուրիցերիս. 18 Մայիս

Հ. Յ. ԳԱՇՎԱՌՆԱՅԻ ԿՕՍԻՏԻՆՍԻՆԻ
ՏԵԿՆԱԿԱՆ ԱՐԾԱԼՈՅՍ ԽՄԲԻՆ

Ձեր տւած պատասխանը դրամը յանձնելու մասին ճիշդ է. ուրեմն և պարզ թէ՛ ձեր այդ գումարը և և Գոյադատէն ժամանակին յանձնել ենք խմբիդ անմիջական բարձրագոյն մարմնին՝ տեղական կոմիտէին, որից այդ գումարի փոխարէն պաշտօնական ստացագիր էք ընդունել. ինչ որ և հրապարակաւ յայտարարեցիք:

Այդ էր և մեր միակ պարտականութիւնը:

Գալով այն կէտին թէ մեր միջոցաւ ձեր բարձրագոյն մարմնին՝ տեղական կոմիտէին յանձնված գումարը չէ հրատարակվել Դրօշակի մէջ, Պատասխանատուն միմիայն Գուք էք, գոնէ իմ միջոցով յանձնվածի համար: Ահա թէ ինչո՞ւ:

Դաշնակցութեան համար օրէնք չէ (՝) որ գանձված գումարները անպատճառ օրգանի մէջ յատարակվեն. նրա մարմինները և գործիչները պարտաւոր են միայն իրենց անունով և պատասխանատուութեամբ գանձված գումարներին համար պաշտօնական ստացագրեր և ընկալարժեք տալ ու կանոնաւոր տոմար պահել. հրատարակվում են միայն այն գումարները որոնց տուղները այդ պահանջում են:

Խումբը այս երկու տարւայ մէջ «երբէք» ինձ չէ յայտարարել որ իմ միջոցաւ կոմիտէին յանձնված գումարը չէ հրատարակվել Դաշնակցութեան օրգանում, ոչ անպաշտօն կերպով և ոչ պաշտօնապէս: Ընդդէմ այդպիսի մի միջադէպ տեղի է ունեցել խմբիդ և անմիջական բարձրագոյն մարմնին՝ տեղական կոմիտէի միջեւ, բայց այդ «միջոցով» յանձնված գումարի մասին չէ եղել: Այդ միջադէպը տեղի է ունեցել իմ Պուլկարիայից հեռացած միջոցին: Իմ կրկին վերադառնալուց վերջին է որ խումբը իմ միջոցաւ դրամ է յանձնել տեղական կոմիտէին, ու իր նախկին տւած գումարի հետ միասին պաշտօնական ստացագիր ընդունել նրանից:

Ինչո՞ւ լռեցիք, և այսչափ երկար. գուցէ մտածեցիք թէ ես պարտական էի հետեւել որ իմ միջոցաւ կոմիտէին յանձնված գումարը հրատարակվի Դրօշակում: Շատ էք սխալվել. ես պարտական եմ հետեւել այն գումարներին մասին, որոնք ուղղակի

(՝) Թերթեցէք Դաշնակցութեան ծրագիրը:

իմ պատասխանատուութեան տակ են յանձնվում ինձ և պահանջվում որ հրատարակվեն:

Գուք երկու ամբողջ տարի լռել էք. ես տեղական կոմիտէի անդամ չէի և երբէք չեմ եղել, գիտէի որ կոմիտէին ձեզ պաշտօնական հաստատուն ստացագիր է տւել, ուրեմն ի՞նչ պարտականութիւն ունէի հետաքրքրվելու հրատարակված է թէ ո՞չ և ի՞նչ դիտանայի թէ չէ հրատարակվել ձեր յանձնած գումարը:

Յետոյ՝ խումբը իրեն հրաժարեալ է հռչակում՝ կարծես հաստատուելով այն տարածայնութիւնը որ կասկածի է ընկնել: Որչափ ինձ յայտնի է, այս երկու տարվայ մէջ դուք ձեր կասկածները չէք յայտնել, դուք ոչ հրաժարվել էք և ոչ էլ վերջնականապէս ձեր հաշիւները յանձնել տեղական կոմիտէին. . . .

Յուսով եմ որ հիմա տեղական կոմիտէին այդ ինքիբը ձեռք կառնի, որովհետեւ խումբը լռութեամբ է անցել իր յանձնած գումարի քանակութիւնը, որը տեղական ինձ մտտել ձգտող թերթերը հազարներին են հասցնում, ինչպէս և ձեր անունով ինձ զրպարտողները:

Իսկ ես իմ կողմից հարցնում եմ, եթէ թերթերի և զրպարտիչների յայտարարածը ճիշդ է, ո՞ւր էք դրել մնացորդը. . . .

Խմբիդ մեր միջոցաւ կոմիտէին յանձնած գումարը համեմատվել չէ կարող այդ հազարաւոր ֆրանկներին հետ, ուստի կամ այդ թերթերը և զրպարտիչները անպատկառ ստախոսներ են, կամ նրանք ճիշդ են խօսում և Արշալոյս խումբը Դաշնակցութեան անունով իր հաւաքած գումարի ամենախոշոր մասը. . . . թաղցրել է: Եւ ահա իսկապէս ԱՆՀԱՍԿԻՆՍԿԻ կէտը, յարգելի մասնախումբ, բայց ոչ «Դրօշակ» մէջ չը հրատարակվելը:

Հիմա ուրիշ խօսք:

Ես պահանջում եմ որ խումբը հրապարակաւ պարզէ թէ իմ և Գոյադատէի միջոցաւ քանի ֆրանկ է յանձնել տեղական կոմիտէին, նոյն իսկ տեղական թերթերի այս շաքաթ օրւայ թւի մէջ. մաս մաս և ամբողջ գումարը յայտարարելով: Մեծ փափագ ունեմ հասարակութեան առաջ պարզելու՝ արդեօք թերթեր են սուտ խօսում և ձեր հաւաքած գումարը խոշորցնում, թէ մասնախումբը իր հաղարեւրով հաւաքած «անձայր գումարներին» մի չնչին մասն է միայն մեր միջոցաւ Դաշնակցութեան յանձնել: Այդպիսով միայն բաւականութիւն կանոնայ ժողովրդի այն «արգար պահանջը», որի անունով հրապարակ եկաք և հասարակութիւնը ձեզ կը սայ իր «վստահութիւնը» որի անունով ձեզ հրատէր կարգացվեց:

Իսկ եթէ Արշալոյս խումբը չը

բարեհաճի իմ պահանջակատարել, ես պարտաւորված՝ խմբիդ հաշուակալուհուն և գանձապահուհուն պէտք է իբր վկանել հրաւիրեմ Պետական Դատարանը արդէն դատի յանձնված զրպարտիչ երեք պարտներին Իրաւունքի խմբ. Յակոբ Գուրպէթեանին, Արշամ Փաշաճեանին և Նրուանդ Թուրլուճեանին գատի միջոցին, որոնք խմբիդ անունով ինձ զոչ էին ուղում հռչակել: ԱՐՎԱՍԻ

ԽՄԲՄԱԼԲԸ ՊԱՏԱՍԽԱՆ ԶԷ

Էֆհէսիս կեպուր սիկիսի սկսք էքսի:

Եթէ մէկը անհատի մը կամ մարմնի մը գիտողութիւնը ընէ, գիտուած է որ, յաճախ, պատասխանողը բուն հարցումէն խոյս տալու համար, այս կամ սոոր պէս ծիծաղելի խօսքեր մէջ տեղ կը նետէ:

Ատանկ խեղճուկ պատասխան մը գոնէ չէի սպասեր «Նարմուս» 226 թուին մէջ իր Որբախնամներու շուրջը վերնագրով յօդուածիս «Երբան պարզ, ճշմարիտ» բնական գիտողութիւններու համար: Իայց «Իրաւունք» 37 թուին մէջ, մարդուն մէկը, զըմբազդարար յօդուածս խմբելու ճգնած է, ու այդ խմբման քննարկը իր պառ հեռու են իմ հարցումներու գոհացում տալէ: Ընթերցողէն կը խնդրեմ առնել իմ յօդուածս ալ և անոր իբր պատասխան գրուածն ալ, և դիտել թէ արդեօք կարելի է իմինիս պատասխանը ընդունուիլ: Որ տողիս մէջ աշխատած եմ որբերու հացին արիւն քսել. . . .

Յօդուածագիրը Վառնայէն Թիւրքիի Որբախնամին գործերը գիտէ. աւելի ճիշդ կրկայ են թագրել Թիւրքիէն Վառնայ գացող անձ մը. ուրեմն ինչո՞ւ կը փրփրի և ըսելիքը կը մոռնայ, միթէ իմ գիտողութիւններս Որբախնամին գործագիր անդամներէն մէկերկուքին ժողովին մէջ ըրածներէն տարբեր բաներ էին, չէ՞ որ անոնք պահանջած են— 1.— Որբախնամը այսինչ նահանգին հետ առանց կապելու՝ հիմնել Հայաստանի բոլոր որբերուն անունին: 2.— անոր մուտքը անխափր ամէն հայու առջև բանալ: 3.— հաւաքուած գումարը շուտապէս պատրիարքարան զրկել: Ու այս ճշմարիտ առաջարկութիւնները կը մերժուի ժողովին կողմէ և այդ անդամներն ալ ցաւելով կը հրաժարին. . . .

Առանց երբէք մանրամասնութիւններու մէջ մտնելու, ես նորէն կը հարցնեմ.— միթէ Հայաստանի միւս նահանգներուն հազարաւոր որբերը հայրենիքին խորդ զաւակները են. միթէ որբերու օգնել փափաքողներու մէջ խտրութիւն գնդողները հն միայն հայրենիքի հարազատ զաւակները. և մինչեւ 2000 ֆրանք գո-

յանալու առեւը ի՞նչ պիտի պատասխանուի որբերուն, — սպասէ, գառնուկս, սպասէ, «գարուն գայ կանանչ բունին», սոսկէս չէ՞. ու խեղճ որբերը արգելք չի՞ պիտի ճիտեմնին ծուած բսնն.— մինչեւ «չոր առուն ջուր գայ, գորտին աչքերն ալ գուրս կուրայ», Զառանցանք կամ «սուս վախ» իմ հարցումներու պատասխանը չէ, ևս պատրաստ եմ խօսքս ետ առնելու, եթէ հաստատուի գիտողութիւններու անիրաւ ըլլալը:

Իսկ Վառնայի Որբախնամին երեւումը ես արդէն սրտանց ողջունեցի: Սակայն ո՞չ թէ միայն ես, այլ ամէն հայրէն հասկցող, «Վասպուրականի որբախնամ» ըսելով կըմտնէ մարմին մը՝ որ նպատակ սւնի համաձայն նահանգին որբերը խնամելու միայն, ինչէ՞ն կրնայինք գիտնալ թէ ան բարեմտութիւնը ունի նաեւ օգնել Հայաստանի բոլոր որբերուն հասարակապէս: Ու եթէ սա ճիշդ է, աւելի լաւ չըլլա՞ր անուանել «Հայաստանի որբախնամ», և իր ծրագրին հրատարակումը կամ այս անունին յայտարարութիւնը ամէն հայաստանցիի առ մեծ հրճուանք պիտի պատճառէ:

Ամեն բարեկեցապալ ձեռնարկ գովելով հանդերձ, չենք կրնար ընդունիլ թէ անսխալ կամ անքննադատելի կրնայ ըլլալ անոր ուղղութիւնը. կամ չենք կրնար հետեւցնել թէ քննադատութիւնները վրաս հասցնելու նկատումով կը գրուին: Զէ՛, գիտողութիւնները միշտ օգտակար են, պայմանաւ որ անոնք ըլլան «ճշմարիտ, անկեղծ և արդիւնալից»: Ու ես առանց խղճահարեցում, կրնամ խոստովանիլ թէ, գիտողութիւններս, առանց երբէք կեղծ պարունակելու, միմիայն օգտակար ըլլալու նպատակով են, և անոնք վճիռ արձակելու ո՞չ մէկ դրօշմ չունին, ինչո՞ւ կը խեղճութիւնս. . . . Այս տողերը գրողը սրտանց բազմացող մըն է որբերու բարեկալութեան, և հետեւաբար, իբրեւ հայ, իրաւունք ալ ունի ուրիշ նահանգներու որբերուն եղած զրկանքներն ալ մատնացոյց ընելու: Միայն դատարկ հառաչանքներով կուրծք պատռտելը որբերուն վիճակը բարելաւելու համար իրական օգուտ մը չունի. խորհինք անոնց վրայ առանց «իմ» ու «քո» ի ճղճիմ նկատումներու— և ահա՛ իրական մեղքացող:

Այս պատասխանէս վերջ, յօդուածագրին անիրաւ համեմատութիւններուն, ծիծաղելի հակասութիւններուն և վայրագալու անիմաստ յարձակումներուն ցեխի կոյտնալ—որոնք իր մտքին գոհարներն են անչոյս— նոյնութեամբ իրեն կը վերադառնան, չի մոռնալով անգամ մըն ալ կրկնելու— Որբախնամին դուռը չի փակել ոմանց առջև, այս կամ այն նահանգի որբերը անոր հատկութեն չի զրկել, և խեղճերը չի զրկել մինչեւ դրամը ոմանց փափաքած յանակութեան հասնիլը: